ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմօրէն ողջունում եւ շնորհաւորում ենք Ձեզ ծննդեան 80-ամեայ յոբելեանի առիթով եւ Հայրապետական սիրով բերում ենք Ձեզ Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Մեծարգոյ պրն Յակոբեան, այսօր, Ձեր յոբելեանի առիթով, ուրախութեամբ ենք անդրադառնում, որ Աստծուց պարգեւուած Ձեր ձիրքերն ու շնորհները՝ կրթուելով Մելքոնեան վարժարանի աւանդներով ու փայլ առնելով Կահիրէի եւ Փարիզի գեղարուեստից ակադեմիաներում, ծնունդ են տուել գեղեցիկ ու մեծ արուեստի, որը ամենաբարձր մակարդակներով գնահատուած է հայրենական ու միջազգային արուեստասէր կեանքում: Գեղանկարչութեան բարձունքները նուաճած Ձեր կտաւները անուն ու ճանաչում են բերում Ձեզ եւ հոչակ յաւելում հարուստ ու հինաւուրց մշակոյթ ունեցող մեր ժողովրդին, որի արժանաւոր եւ շնորհաշատ զաւակն էք Դուք՝ Ձեր հոգում միշտ կրելով քրիստոնեայ մեր ժողովրդի արժէքները ու հայրենի ժառանգութիւնը:

Տասնամեակներ շարունակ նշանաւոր տարբեր քաղաքների հանրայայտ թանգարաններում ցուցադրուող Ձեր նկարները ծառայում են հոգեւորի զօրացմանը մարդկանց սրտերում եւ բարու արգասաւորմանը աշխարհում:

Մենք ուրախ ենք նաեւ, որ Ձեր վրձնած կտաւները զարդարում են Վեհարանի պատկերասրահը՝ ի տես Մայր Աթոռիս հիւրերի ու այցելուների:

Մեծարգոյ Յոբելեար, Հայրապետական այսու Կոնդակով բարձր գնահատանքի արժանացնելով Ձեր ծառայութիւնները մեր ժողովրդին՝ Ձեր ծննդեան 80-ամեայ յոբելեանի առիթով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալն Աստուած Իր հանապազ խնամքի ներքոյ պահի ու պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին, պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ օրհնի Ձեր կեանքը նոր յաջողութիւններով ու երկնատուր բարիքներով:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մենք. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 4-ն Յունիսի
Յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 171